

էր որ կը հետաքրքրուէր իմ գրական աշխատութիւնն. որով ու կը քաջաւերէր զիս...¹
Սոյն հատուածին համառօտ և էական մի քանի տեղեկութիւնները բաւ համարելով՝ անցնինք ակնարկ մը տալու անոր գրական կենսոյն:

Անուն մը չհռչակուի՝ մինչև որ անոր գործերը հետաքրքրական չդառնան հրապարակի վրայ՝ այս կամ այն պատճառաւ: Գորէի անուան հռչակուիլն ալ՝ հայերէնի գրականութեան լաւ ծառայելուն հետեանքն էր: Եւ յիշատի ամէնուն ու շարժումները գրուած էր թատերական, լիպական ու քերթողական գրուածքներով, թէև հաւատար արժէք չունենային մտքին այդ երեք հոսանքները: Հիւսած ոտանաւորները հանրութեան զովեստնէրուն արժանացան, և հայերէն լեզուով ալ անոնցմէ զանազան քերթուածներ թարգմանուեցան: Բանաստեղծ էր ինք՝ ոճին և զգացումներուն փափկութեան ու սրտերու հետ խօսելու կարողութեան համար, վասն զի մարդկային էն նուրը զգացումները զգոգնուալ գաղտնիքը գիտէր, կ'ըսէին, և այդ տախին ոչ ոք կարող էր մրցիլ իրեն հետ:

Իր երկասիրութիւնները բազմաթիւ են, որոնցմէ մի քանին միայն յիշենք, որ հետեւեալներն են. « Intimités » (1868). — « Poèmes modernes » (1869). — « Le Passant » (1869). — « Deux douleurs » (1870). — « Plus de sang » (1871). — « Abandonnée » (1871). — « Fait ce que dois » (1871). — « Bijoux de la Délivrance » (1872). — « Rendez - vous » (1872). — « Cahier rong » (1874). — « Récits et Elégies » (1878) — « Les humbles » և այլն, և այլն: Բուն համբաւը կը սկսի 1869ին « Le Passant » թատերախաղով, որ իր միւս թատերախաղերը կը գերազանցէ ունեցած ժողովրդականութեամբ, թէ և անոնք ալ մէյ մէյ գլուխ գործոցներ ըլլալէ չէին դադրեր:

Գաղղիոյ Ճիմարանին անդամակցեցաւ 1874ին, անկէ վերջն ալ հրատարակեց զանազան հատորներ, ու հոգեբանական վէպ մ'ալ « Le Coupable » անուամբ: Իր գործերը շատ լեզուներով ալ թարգմանուած են. և մեր մէջ՝ օրինակի համար՝ ունինք « Հսկումը » և Դարբիննէրու Գործադուլը » (տպ. վեներտ. 1899, թրգմ. Հ. Ա. Ղազիկեան). վերջինս թարգմանուած է նաև Պ. Աղամեանէ, « Հիւսանդապազ Աղջիկը » (թրգմ. Լ. Լեոն Մ. Ա.): « Հանրիէտ » (թրգմ. Ռ. Խ. Թիֆլ. 1899). և այլն: Իսկ իր ոտանաւորներէն շատեր ունինք այս ու այն հայ թերթերուն մէջ, գոր օրինակ՝ 1908ին « Լոյս » պատկերազարդ գրական Հանդէսին մէջ, որուն դադարումը Օսմ. Սահմանադրութիւնն հռչակուելուն կարծես մէկ զոհն էր: Պ. Գորէ՝ սիրուած գրագէտ-բանաստեղծ մ'էր և այնպէս ալ ապրեցաւ. ու միթէ մահուանէ վերջն ալ սիրելիները չ'են դարձեալ որ պիտի փնտռուին²:

Հ. Պ. ՏԱՅԵԱՆ

Մեծ իմաստութիւն է դիւրահաւան չըլլալ և սեփական կայծեաց վրայ յամառ չի գտնուիլ: Նա է ճշմարտապէս մեծ որ իւր ալաց առջև փոքր է:

Բարեկութիւնդ զսպէ՝ մեծ յաղթութիւն տարած կ'ըլլաս:

Անկարելի բաներու մի՛ ցանկար:

Երբ կը խռովինք՝ իմաստասիրութեան դէմ կը մեղանշենք:

Եթէ թշնամի ունիս հաշտուելու ետե՛հ եղի՛ր. բռնութեամբ՝ գործ չի տեսնես:

Այն ատեն ուրախ եղի՛ր՝ երբ բարիք գործես:

Եթէ զօրաւոր ես՝ հեզ եղի՛ր, որպէս զի այլք քեզմէ միշտ պատկառին՝ քան թէ վախճան (Քիւզնէ):

Հոգին Սուրբ՝ արդար հոգւոյ մէջ կը հանգչի՝ ինչպէս ազաւնին իւր բունին մէջ:

Լաւ է՝ Աստուծոյ ծառայող խոնարհ գեղջուկը քան զհպարտ Փիլիսոփայն՝ որ զԱստուած ուրացած՝ կ'իրթերը կը պաշտէ:

Մարդս այնքան կը գործէ՝ որքան որ գիտէ. (Պարօն):

1. « Արեւիկ » 1908 թ. 6800.
2. Հիմա. La Grande Encyclopédie և ժամանակակից պոլսահայ թերթերը: